ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՄԱՐՏԻԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի հրավերով նոյեմբերի 1-ին, ուրբաթ օրը, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ մասնակցելու համար համայն Աֆրիկայի և Ալեքսանդրիայի Տ. Նիկոլաոս Զ հունաց Սրբազան Պատրիարքի՝ Մայր Աթոռ այցելության առթիվ՝ նոյեմբերի 19—26 օրերին կազմակերպվելիք հանդիսություններին:

Մայր Աթոռում գտնված օրերին տ. Տիրայր սրբազանը ուխտագնացություններ է կատարում, պատարագում և քարոզում մի շարք եկեղեցիներում:

Նոյեմբերի 15—16 օրերին տ. Տիրայր եպիսկոպոսը, Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոսի հրավերով, այցելում է Շիրակի պատմական հուշարձանները, այդ թվում՝ Հառիճայի, Մարմաշենի, Սանահնի և Հաղբատի վանքերը:

Դեկտեմբերի 1-ին, կիրակի օրը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի հրավերով, տ. Տիրայր եպիսկոպոսը Երևանի ս. Հովհաննես եկեղեցում պատարագում է և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում հավատացյալներին:

Տ. Տիրայր սրբազանը հայ եկեղեցու երիտասարդ ու խոստումնալից իշխանավորներից մեկն է: Նա 14 տարի ձեռնհասորեն ղեկավարում է Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերը՝ սրտեռանդն մասնակցությամբ և համերաշխ գործակցությամբ վերոհիշյալ համայնքների պատվարժան թեմական իշխանությունների:

Տ. Տիրայր սրբազանն իր առաջնորդության տարիներին բարեկամական, սիրալիր հարաբերություններ է պահել և պահում է էկումենիկ ոգով Ռումինիայի և Բուլղարիայի օրթոդոքս քույր եկեղեցիների հոգևոր պետերի, հոգևորականության, ինչպես նաև օրինական, գործնական ու բարոյական գետնի վրա լավ հարաբերություններ՝ տեղի պետական իշխանությունների հետ:

Այս տարի, մարտին, տ. Տիրայր սրբազանը Ռումինիայի Արևելագետների միության հատուկ ժողովում միաձայնությամբ ընտրվել է վերոհիշյալ միության անդամ:

Մայիսին տ. Տիրայր եպիսկոպոսը, որպես թեմական առաջնորդ, մասնակցել է Բուխարեստում Պետական պալատի Սոցիալիստական Միասնության ճակատի անդրանիկ համագումարին՝ ընկերակցությամբ Ռումինիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ դոկտ. Գրիգոր Բամբուկճյանի և Բուխարեստի հայոց հոգևոր հովիվ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանի:

Սոցիալիստական Միասնության ճակատի համագումարը, ի շարս Բուխարեստի այլ հոգևոր պետերի, տ. Տիրայր եպս. Մարտիկյանին միաձայնությամբ ընտրում է Սոցիալիստական Միասնության ճակատի Գերագույն Ազգային Խորհրդի անդամ:

Օգոստոսին, Ռումինիայի ազատագրության 30-ամյակի կապակցությամբ, Ռումինիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը պարգևատրվում է «Ռումինիայի հանրապետության աստղ» շքանշանի 3-րդ աստիճանով, Սոցիալիստական Միասնության ճակատի Գերագույն Ազգային Խորհրդի նախագահ Չաուշեսկուի վկայականով և 30-ամյակի մեդալով:

Դեկտեմբերի 3-ին, երեքշաբթի օրը, տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը, հրաժեշտ տալով Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռին, մեկնում է իր թեմ՝ Բուխարեստ: